ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

18.09.2020թ. N 01.1/15/07249-2020

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ
ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ Շ.Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի սեպտեմբերի 14-ի առցանց հարցման, հայտնում եմ, որ Կոտայքի մարզպետարանում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը Ինգա Հայրիյանն է (հեռ. 098 01 40 91, 0223 2 73 37):

Կից տրամադրում եմ Կոտայքի մարզպետի համապատասխան որոշման պատճենը Կոտայքի մարզպետարանում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձի նշանակման վերաբերյալ:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

18.09.2020

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Подписано: AVETISYAN ARNAK 1701920336

Կատարող՝ Տեղեկատվության և
հասարակայնության հետ
կապերի բաժին
0223 2 73 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2020 թվականի N 352-Ա

Ի. ՀԱՅՐԻՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 13-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար *Ինգա Վաչագանի Հայրիյանին* նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձին՝ ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված պարտականությունների իրականացումը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հունիսի 14-ի *«Գ. Առուստամյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ նշանակելու մասին»* N 143-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 17
ք. Հրազդան